

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### ԳԼՈՒԽ 1

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

##### **Հոդված 1 . Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ստացման, փորձարկման, բազմացման, պահման, ոչնչացման կամ վնասազերծման, ներառյալ դրանց արտահանման, ներմուծման եւ անդրսահմանային տեղափոխության հետ կապված հնարավոր անբարենպաստ ազդեցությունից շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության պահպանության ու կենսաանվտանգությանն առնչվող հարաբերությունները՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը:

##### **Հոդված 2. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում գործածվող հիմնական հասկացություններն են՝

**անդրսահմանային տեղափոխություն՝** գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների տարանցիկ փոխադրումը մի պետությունից մեկ այլ պետություն.

**ապօրինի գործածություն՝** սույն օրենքով սահմանված նորմերի եւ կանոնների խախտմամբ իրականացված գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործընթաց.

**արտահանող՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների արտահանումը.

**արտահանում՝** կանխամտածված անդրսահմանային տեղափոխություն մի երկրից մյուս երկիր.

**գենետիկական անվտանգության գոտի՝** տարածք, որի սահմաններում արգելվում է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի գործածության որեւէ գործընթաց.

**գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմ՝** (կամ կենդանի վերափոխված օրգանիզմ)՝ ցանկացած կենդանի օրգանիզմ, որը պարունակում է ժամանակակից կենսատեխնոլոգիայի գործածության շնորհիվ ստացված գենետիկական նյութի նոր համակցություն.

**գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածություն՝** գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների մեկուսացված համակարգում հետազոտություն, ստացում,

աճեցում, բազմացում, փորձարկում, պահում, տեղափոխում, ոչնչացում կամ վնասազերծման ցանկացած ձեւ, ներառյալ դրանց հետ կապված արտահանումը, ներմուծումը եւ անդրսահմանային տեղափոխությունը.

**գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության հետ կապված կենսաբանական անվտանգություն (այսուհետ՝ կենսաանվտանգություն)**՝ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ապահովման սկզբունքների, մեխանիզմների եւ իրավական հիմքերի սահմանում.

**գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ապահովում**՝ երաշխիք, որ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ցանկացած գործընթաց անբարենպաստ ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով նաեւ մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

**ժամանակակից կենսատեխնոլոգիա նշանակում է կիրառել**՝ նուկլեինաթթվի օգտագործման in vitro (օրգանիզմից դուրս) մեթոդը, ներառյալ ռեկոմբինանտային դեզօքսիդիբոնուկլեինաթթուն (ԴՆԹ) եւ նուկլեինաթթվի ուղղակի ներարկումը բջիջների կամ օրգանելայի մեջ, կամ տաքսոնոմիկ կարգավիճակ ունեցող օրգանիզմների բջիջների միացման մեթոդներ, որոնք թույլ են տալիս հաղթահարել բնական ֆիզիոլոգիական վերարտադրվող կամ ռեկոմբինացիոն արգելքները եւ աճեցման ու սելեկցիայի ավանդական մեթոդներ չեն հանդիսանում.

**կենդանի օրգանիզմ**՝ ցանկացած կենսաբանական գոյություն, որն ունի գենետիկական նյութի փոխանցման կամ վերարտադրման ունակություն, ներառյալ ստերիլ օրգանիզմները, վիրուսները եւ վիրոիդները.

**կենսաբանական բազմազանություն (այսուհետ՝ կենսաբազմազանություն)**՝ ցամաքային, օդային եւ ջրային կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է ներտեսակային, միջտեսակային եւ էկոհամակարգերի բազմազանություն.

**Կողմ**՝ Հայաստանի Հանրապետության կողմից 2004 թվականի մարտի 16-ին վավերացրած (Ն-081-3) Կենսաբանական բազմազանության վերաբերյալ կոնվենցիայի «Կենսաբանական անվտանգության մասին» կարթագենյան արձանագրության կողմ հանդիսացող երկիր.

**հայտ**՝ փաստաթուղթ, որի միջոցով հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին (այսուհետ՝ լիազորված պետական կառավարման մարմին)՝ իր կողմից նախատեսվող գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության լիցենզիա ստանալու նպատակով.

**հայտատու**՝ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի գործածությամբ զբաղվելու ցանկություն ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ (գիտական համապատասխան որակավորում ունեցող).

**մեկուսացված համակարգ**՝ փակ, արտաքին միջավայրի հետ շփումը սահմանափակող հատուկ տարածք կամ կառույց.

**մեկուսացված համակարգերում գործածություն՝** մեկուսացված համակարգում իրականացվող ցանկացած գործողություն, որը ընդգրկում է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներ, որոնք վերահսկվում են արտաքին միջավայրի հետ շփումը եւ նրա նկատմամբ ունեցած ազդեցությունն արդյունավետորեն սահմանափակող հատուկ միջոցներով.

**ներմուծող՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծումը.

**ներմուծում՝** կանխամտածված անդրսահմանային տեղափոխություն մի երկրից մյուս երկիր.

**պատահար՝** գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության ցանկացած դեպք, որը կարող է վտանգ սպառնալ շրջակա միջավայրին, կենսաբազմազանությանը, մարդու առողջությանը.

**ռիսկի գնահատում՝** շրջակա միջավայրի, կենսաբազմազանության պահպանման նկատմամբ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների հնարավոր անբարենպաստ ազդեցության գնահատում՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը.

**ռիսկի կառավարում՝** ռիսկի գնահատման արդյունքների վրա հիմնված կենսաբազմազանության պահպանման եւ կայուն օգտագործման նկատմամբ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների անբարենպաստ ազդեցությունը կանխարգելու միջոցառումներ՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը.

**տեղեկատվություն տրամադրող հաստատություն՝** գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության վերաբերյալ գիտական, տեխնիկական, բնապահպանական եւ իրավական տեղեկատվություն տրամադրող հաստատություն:

### **Հոդված 3. Օրենքի կիրառման ոլորտը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության հետ կապված հետեւյալ գործընթացների վրա՝

1) մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների հետազոտության, ստացման, աճեցման, բազմացման, փորձարկման, պահման, տեղափոխման, ոչնչացման կամ վնասագերծման ցանկացած ձեւերի, ներառյալ դրանց հետ կապված արտահանում , ներմուծում եւ անդրսահմանային տեղափոխություն:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում այնպիսի գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության վրա, որոնք հանդիսանում են՝

1) մարդու եւ կենդանիների բուժման համար նախատեսված դեղագործական պատրաստուկներ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված մարդու եւ կենդանիների համար 1-4-րդ խմբերի ախտածին միկրոօրգանիզմներ, հելմինթներ եւ կենսաբանական ծագում ունեցող թույլներ:

#### **Հոդված 4. Օրենքի նպատակն ու խնդիրները**

1. Օրենքի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության ապահովումը՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը:

2. Օրենքի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կենսասանվտանգության ոլորտի կարգավորման մարմինների սահմանումը.

2) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության ապահովման սկզբունքների եւ իրավական հիմքերի սահմանումը.

3) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության հետ կապված շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելման, կամ նվազագույնին հասցնելու պահանջների եւ պայմանների սահմանումը՝ հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

4) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման եւ հասարակության իրազեկման ապահովումը:

#### **Հոդված 5. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության իրավական կարգավորումը**

1. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով ու իրավական ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

#### **Հոդված 6. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության ապահովման հիմնական սկզբունքները**

1. Կենսասանվտանգության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

1) շրջակա միջավայրի, կենսաբազմազանության, մարդու կյանքի եւ առողջության պահպանության գերակայությունը գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների տնտեսական արդյունավետության նկատմամբ.

2) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության յուրաքանչյուր դեպք կամ գործընթաց լիցենզավորվում է միայն շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցության բացառման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված անվտանգության երաշխիքների առկայության դեպքում՝ հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

3) ցանկացած գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի գործածության կենսաանվտանգության յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության գնահատում՝ հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

4) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության վերաբերյալ ապահովում է տեղեկատվության հրապարակայնությունը եւ մատչելիությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

5) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության որոշումների կայացման գործում հանրության մասնակցության ապահովումը եւ կարծիքը հաշվի առնելը.

6) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության հետ կապված յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ որպես պոտենցիալ կենսաբանական վտանգ դիտարկելը.

7) Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է գենետիկական անվտանգության գոտի և գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածությունից զերծ կամ կենսաանվտանգ տարածք.

8) Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծումը, արտահանումը եւ անդրսահմանային տեղափոխությունը լիցենզավորվում է մեկուսացված համակարգում գործածության համար:

## **Հոդված 7. Ռիսկի գնահատումը**

1. Կախված շրջակա միջավայրի, կենսաբազմազանության պահպանման նկատմամբ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների հնարավոր անբարենպաստ ազդեցությունը, հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգը, մեկուսացված համակարգերի համար իրականացվում են ռիսկի գնահատում:

2. Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության յուրաքանչյուր գործընթացի ռիսկի գնահատման չափանիշներն ու կենսաանվտանգության ապահովման նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

3. Ռիսկի գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների նկատմամբ, յուրաքանչյուր դեպքի համար՝ գիտականորեն հիմնավորվածության եւ թափանցիկության սկզբունքով, հաշվի առնելով սույն օրենքով եւ միջազգային կանոնակարգերով սահմանված ռիսկի գնահատման մեթոդներն ու ուղեցույցները: Ռիսկի գնահատումը յուրաքանչյուր օրգանիզմի նկատմամբ,

յուրաքանչյուր դեպքի համար իրականացվում է համապատասխան լիազորված պետական կառավարման մարմնի կողմից ձեւավորված փորձագիտական խմբի կողմից:

4. Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ռիսկի գնահատման կարգը եւ մեթոդական ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## **ԳԼՈՒԽ 2**

### **ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 8. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները**

1. Կենսաանվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է՝

1) լիազորված պետական կառավարման մարմնի (մարմինների) ճանաչումը.

2) պետական կառավարման մարմինների լիազորությունները սահմանելը.

3) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության դեպքում հնարավոր բացասական ազդեցությունից շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության պահպանության պետական ծրագրերի ընդունումը.

4) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ապահովման վերաբերյալ սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կարգավորման ենթակա իրավական ակտերի ընդունումը.

5) սահմանում է մեկուսացված համակարգին ներկայացվող տեխնիկական եւ մեթոդական պահանջները:

2. Օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

**Հոդված 9. Կենսաանվտանգության ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինների իրավասությունները**

1. Կենսաանվտանգության ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինների իրավասությունն է՝

1) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության հնարավոր բացասական ազդեցությունից շրջակա միջավայրի, կենսաբազմազանության պահպանության պետական ծրագրերի մշակումը՝ հաշվի առնելով նաեւ մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

2) լիցենզիաների տրամադրումը, կամ դրանց մերժումը.

3) միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնելը.

4) հասարակության տարբեր խավերի իրազեկության բարձրացման եւ կրթադաստիարակչական նպատակով համապատասխան գիտակրթական եւ ուսուցողական ծրագրերի մշակումը եւ իրականացումը.

5) վերահսկողություն այս բնագավառում գործող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

2. Օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 10. Կենսաանվտանգության ոլորտում տարածքային կառավարման մարմինների իրավասությունները**

1. Կենսաանվտանգության ոլորտում տարածքային կառավարման մարմինների իրավասություններն են՝

1) իրենց վարչական սահմաններում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կամ հնարավոր գործածության կամ անդրսահմանային տեղափոխության վերաբերյալ լիազորված պետական կառավարման մարմիններին գրավոր տեղեկացնելը.

2) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կամ հնարավոր գործածության դեպքում հնարավոր անբարենպաստ ազդեցություններից պահպանության իրականացման համար իրենց վարչական սահմաններում գենետիկական անվտանգության գոտիներ հայտարարելու վերաբերյալ որոշումներ կայացնելը:

2. Օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 11. Կենսաանվտանգության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները**

1. Կենսաանվտանգության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են՝

1) համայնքի վարչական սահմաններում նախատեսվող գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կամ հնարավոր գործածության վերաբերյալ տարածքային կառավարման մարմիններին եւ լիազորված պետական կառավարման մարմիններին գրավոր տեղեկացնելը.

2) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության հնարավոր անբարենպաստ ազդեցություններից շրջակա միջավայրի, կենսաբազմազանության պահպանության համար գենետիկական անվտանգության գոտիներ հայտարարելու վերաբերյալ որոշումներ կայացնելը:

2. Սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**ԳԼՈՒԽ 3**

**ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

**Հոդված 12. Փորձագիտական խմբի կազմը եւ կառուցվածքը**

1. Փորձագիտական խմբի կազմը ստեղծվում է համալրվում է ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից:
2. Փորձագիտական խումբը բաղկացած է կենսաբանության, բնապահպանության, գյուղատնտեսության, գենետիկայի, առողջապահության, մանրէաբանության, կենսատեխնոլոգիայի, էկոլոգիայի, բուսաբանության, կենդանաբանության, մոլեկուլային կենսաբանության եւ այլ ոլորտների համապատասխան փորձագետներից ու մասնագետներից:

### **Հոդված 13. Փորձագիտական խմբի գործունեություն**

1. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության յուրաքանչյուր նախատեսվող գործընթացի ռիսկերի գնահատման փորձաքննությունն իրականացվում է՝ փորձագիտական խմբի կողմից: Փորձագիտական եզրակացությունը անհրաժեշտ է լիազորված պետական կառավարման մարմնի համար:
2. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության տեղեկությունները ճշգրտելու անհրաժեշտության դեպքերում ռիսկի գնահատման փորձաքննությունը կարող է իրականացվել միջազգային կանոնակարգերով սահմանված երաշխավորված մեթոդներով հավատարմագրված լաբորատորիայում, որն ունի նշված նյութերի փորձաքննության ոչ պակաս երեք տարվա աշխատանքային փորձ:
3. Փորձագիտական խումբը որոշումներ կայացնում կամ դրական եզրակացություն տրամադրում է խմբի բոլոր անդամների համաձայնությամբ (կոնսենսուս):
4. Փորձաքննության համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով եւ չափերով:
5. Մինչեւ փորձագիտական եզրակացություն կայացնելը, պետք է կազմակերպվի հասարակական լուսններ ՀՀ կառավարության սահմանած կարգով :
6. Փորձագիտական խմբի կողմից փորձագիտական եզրակացության ներկայացման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## **ԳԼՈՒԽ 4**

### **ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

#### **Հոդված 14. Մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգություն**

1. Մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածություն իրականացնելու լիցենզիա ստանալու համար, իրավաբանական կամ ֆիզիկական անձը ներկայացնում է համապատասխան հայտ:
2. Մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության հայտում պահանջվող տեղեկություններն են՝
  - 1) Իրավաբանական կամ ֆիզիկական անձի լրիվ անվանումը.



2) գենետիկական անվտանգության գոտու չափերի վերաբերյալ, որի հեռավորությունը բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանական գոտու, բուսական ու կենդանական աշխարհի պահպանության օբյեկտների, գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցրած հողատարածքների կամ գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերի կամ բնակավայրերի սահմաններից պետք է լինի առնվազն 15 կմ հեռավորության վրա.

3) հայտատուի, օգտագործվող կենդանի օրգանիզմների եւ դրանց ձեւափոխման մեթոդների, նախատեսվող գործընթացի, ինչպես նաեւ այդ գործընթացն իրականացնելու համար նախատեսված միջավայրն ու գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմը, այդ թվում՝ նոր ստացվող, բնութագրող հատկանիշների վերաբերյալ.

4) նախատեսվող աշխատանքային տարածքի, օգտագործվող սարքավորումների եւ դրանց տեխնիկատեխնոլոգիական պայմանների, կիրառվելիք մեկուսացման միջոցների, գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ոչնչացման կամ վնասագերծման, ինչպես նաեւ տվյալ գործընթացում ներգրավված աշխատողների մասնագիտական որակավորումների վերաբերյալ.

5) մեկուսացված համակարգերում գործածության համապատասխան գործընթացի կենսաանվտանգության ռիսկի գնահատման վերաբերյալ.

6) սույն օրենքի 25-րդ հոդվածում նշված հասարակական լսումների արդյունքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը.

7) տվյալ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների Հայաստանի Հանրապետության տարածքում եւ դրանից դուրս մեկուսացված համակարգերում գործածության կենսաանվտանգության եւ դրանց արդյունքների վերաբերյալ՝ եթե այդպիսիք առկա են.

8) տվյալ գործընթացի ժամանակ հնարավոր պատահարների դեպքում իրականացվելիք արտակարգ իրավիճակի պլանը, որն իր մեջ պետք է ներառի տեղեկություններ.

ա) պատահարի դեպքում մարդու կյանքի եւ առողջության, շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության վերաբերյալ.

բ) պատահարի անբարենպաստ ազդեցության եւ վերացման միջոցառումների վերաբերյալ.

գ) պատահարի վերացման միջոցառումների իրականացման գործում ներգրավվող անձանց կամ կազմակերպությունների կամ ծառայությունների եւ վերջիններիս համաձայնության վերաբերյալ.

դ) պատահարի դեպքում լիազորված պետական կառավարման մարմիններին, պատահարի վերացման միջոցառումների իրականացման գործում ներգրավվող անձանց կամ կազմակերպություններին կամ ծառայություններին, ինչպես նաեւ հանրությանը տեղեկացնելու եւ նախազգուշացնելու միջոցների վերաբերյալ:

3. Մեկուսացված համակարգերում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության հայտի ձեւը եւ ներկայացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

4. Սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական կամ ֆիզիկական անձը մեկուսացված համակարգում գործածության ընթացքում ռիսկի փոփոխություններ բացահայտելու դեպքում, իսկ կենդանի օրգանիզմների ձեւափոխման դեպքում՝ նաեւ ստացված նոր գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմները բնութագրող հատկանիշների վերաբերյալ գրավոր տեղեկացնում է լիազորված պետական կառավարման մարմինին :

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվության ներկայացման ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի մեկուսացված համակարգում գործածության համար տրված լիցենզիայի մեջ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված ժամկետներում տեղեկատվություն չստանալու դեպքում համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինը իրավունք ունի դադարեցնել տվյալ գործունեությունը եւ այն անվավեր ճանաչել:

7. Մեկուսացված համակարգերում օգտագործման ընթացքում ռիսկի փոփոխություններ կարող են առաջանալ նաեւ այն դեպքերում, երբ հայտնի են դառնում գիտականորեն հիմնավորված նոր փաստեր՝ շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա տվյալ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ազդեցության մասին, հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը:

8. Եթե, սույն հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասով սահմանված ռիսկի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը, համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինը պարտավոր է պահանջել մեկուսացված համակարգում գործածության պայմանների փոփոխություն, որը չապահովելու դեպքում՝ պարտավոր է անմիջապես սույն օրենքի համաձայն կասեցնել, դադարեցնել լիցենզիայի գործողությունը:

9. Լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

### **Հոդված 15. Մեկուսացված համակարգերում պատահարների վերահսկման մեխանիզմներ**

1. Մեկուսացված համակարգերում գործածության ընթացքում տեղի ունեցած պատահարի դեպքում գործածողն անհապաղ գրավոր տեղեկացնում է համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինին՝ պատահարի իրադրության, գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների տեսակի եւ պատահարի վերացման նպատակով ձեռնարկված միջոցառումների եւ պատահարի հնարավոր անբարենպաստ հետեւանքների վերաբերյալ:

2. Տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու դեպքում համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինը պարտավոր է դադարեցնել տվյալ գործունեությունը՝ պահանջելով մեկուսացված համակարգում գործունեություն ծավալողից գործածության ընթացքում տեղի ունեցած պատահարի վնասակար հետեւանքների վերացում՝ սեփական միջոցների հաշվին:

3. Համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինը՝ գնահատելով շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա պատահարի հետեւանքների հնարավոր անբարենպաստ ազդեցությունը հանրությանը զանգվածային լրատվական միջոցներով անհապաղ տեղեկացնում է այդ մասին եւ միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ:

4. Յուրաքանչյուր պատահարի դեպքում, անբարենպաստ ազդեցությունների վերացման անհրաժեշտ միջոցառումները եւ դրանք իրականացնող մարմինների կազմն ու միջոցները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## ԳԼՈՒԽ 5

### **ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հոդված 16. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման, արտահանման եւ անդրսահմանային տեղափոխությանը ներկայացվող պահանջները**

1. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծումը, արտահանումը կամ անդրսահմանային տեղափոխությունը կարող է իրականացվել, եթե ապահովվել են՝

1) սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հայտում պահանջվող տեղեկությունները.

2) բոլոր պետական եւ այլ մարմիններից պահանջվող համաձայնեցումները եւ այլ փաստաթղթերը.

3) ռիսկերի գնահատումը.

4) փաթեթավորման, պիտակավորման եւ մակնշման պահանջների եւ պայմանների պահպանումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնների եւ ստանդարտների.

5) տեղեկատվության փոխանակման ապահովումը:

#### **Հոդված 17. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման նախնական համաձայնության ընթացակարգը**

1. Նախնական համաձայնության ընթացակարգը ներառում է՝

1) ներմուծման մտադրության վերաբերյալ նախապես ծանուցում լիազորված պետական կառավարման մարմնին.

2) ներմուծման համաձայնեցումը:

2. Ներմուծողը՝ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման մտադրության վերաբերյալ գրավոր ծանուցում է (տեղեկացնում) լիազորված պետական կառավարման մարմնին:

3. Լիազորված պետական կառավարման մարմինը սույն հոդվածի 2-րդ մասում նշված գրավոր ծանուցումը ստանալուց հետո, 90 օրվա ընթացքում, ներմուծողին գրավոր պատասխանում է, նշելով՝

1) ծանուցման ստացման ամսաթիվը.

2) պարունակում է արդյոք, ներկայացված ծանուցումը լիազորված պետական կառավարման մարմինների պատասխանը ստանալու համար անհրաժեշտ տեղեկություններ.

3) տեղեկություններ՝ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության համապատասխան գործընթացի հայտի ձեւի եւ դրա ներկայացման ընթացակարգի վերաբերյալ:

**Հոդված 18. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման համաձայնության ընթացակարգը**

1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման համաձայնեցման համար լիազորված պետական կառավարման մարմին են ներկայացնում՝

1) մեկուսացված համակարգում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի գործածության նպատակով ներմուծման դեպքում՝ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկություններով հայտը.

2) տեղեկություններ՝ փոխադրման միջոցների եւ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների անվտանգ տեղափոխելու պայմանների վերաբերյալ.

3) ներմուծման ժամանակ հնարավոր պատահարների դեպքում իրականացվելիք արտակարգ իրավիճակի պլանը:

2. Լիազորված պետական կառավարման մարմինը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխան ներմուծման համաձայնություն ստանալու նպատակով ներկայացված հայտերը ստանալուց հետո 90 օրվա ընթացքում համապատասխան հայտատուին գրավոր ներկայացնում է հետեւյալ պատասխաններից մեկը՝

1) Հայտը ընդունվում է.

2) Հայտը մերժվում է.

3) եթե համայնքը հայտարարում է գենետիկական անվտանգության գոտի, դա հանդիսանում է հայտի մերժման հիմք:

3. Հայտի ընդունումից հետո լիազորված պետական կառավարման մարմինը գիտական ամբողջ տեղեկատվությունը սահմանված կարգով ներկայացնում է փորձագիտական խմբի եզրակացությանը: Լիազորված պետական կառավարման մարմինը 90 օրվա ընթացքում նախատեսված ընթացակարգերին համապատասխան գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ներմուծման վերաբերյալ հայտատուին գրավոր ուղարկում է հետեւյալ պատասխաններից մեկը՝

1) ներմուծման գործընթացը լիցենզավորել.

2) ներմուծումն արգելել.

3) անհրաժեշտ են որոշակի լրացուցիչ տեղեկատվություն.

4) լրացուցիչ տեղեկատվությունները գնահատելու նպատակով պատասխանի ներկայացման ժամկետն անհրաժեշտ է երկարաձգել 180 օրով:

### **Հոդված 19. Լիազորված պետական կառավարման մարմինների կողմից ներմուծման վերաբերյալ տրամադրված պատասխանների վերանայումը**

1. Լիազորված պետական կառավարման մարմինները կարող են վերանայել իրենց կողմից ներմուծման վերաբերյալ տրամադրված պատասխանը գիտական նոր տվյալների հիման վրա:

2. Հայտատուն պարտավոր է լիազորված պետական կառավարման մարմնի կողմից ներմուծման վերաբերյալ տրամադրված պատասխանը վերանայելու նպատակով պատասխանը ստանալուց հետո 5 օրյա ժամկետում գրավոր դիմել լիազորված պետական կառավարման մարմնին՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հայտերի միջոցով, եթե՝

1) փոխվել են պատասխանի համար հիմք հանդիսացած ռիսկերի գնահատման արդյունքներն որոշելու պայմանները.

2) տիրապետում է լրացուցիչ գիտական տեղեկատվության, կամ առկա են պատասխանի գիտականորեն հիմնավորված չլինելու վերաբերյալ ապացույցներ:

3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո, 5-օրյա ժամկետում լիազորված պետական կառավարման մարմինը ներմուծման վերաբերյալ պատասխանի վերանայման, ինչպես նաեւ դրա փոփոխության պատճառների մասին գրավոր տեղեկացնում է ծանուցողին, եթե վերանայման նախաձեռնությունն իրենը չէ: Վերանայումը կարող է տեւել 180 օր:

### **Հոդված 20. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ապօրինի գործածությունը**

1. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ապօրինի գործածության դեպքերի վերաբերյալ համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինները տեղեկատվություն տրամադրող հաստատության միջոցով տեղեկացնում են միջպետական մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան:

2. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների կամ դրանց համակցության ապօրինի գործածության դեպքերում համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինը միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան միջոցներ է ձեռնարկում տեղեկացման, ինչպես նաեւ շրջակա միջավայրին եւ կենսաբազմազանությանն առնչվող ցանկացած սպառնալիքի բացառման ուղղությամբ:

3. Լիազորված պետական կառավարման մարմինը զանգվածային լրատվության բոլոր միջոցներով հասարակայնությանը տեղյակ է պահում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների կամ դրանց համակցության ապօրինի գործածության հետեւանքով ի հայտ եկող իրավիճակները կանխող միջոցների մասին:

**ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 21. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը**

1. Հայաստանի Հանրապետության կենսասանվտանգության ոլորտի կարգավորման մարմինները պարտավոր են պահպանել ՀՀ օրենքով գաղտնիք կազմող տեղեկատվությունը:

2. Բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող տեղեկատվության պահպանման եւ տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

3. Գաղտնի չեն կարող համարվել գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության հետ կապված հետեւյալ բնույթի տեղեկությունները՝

1) հայտատուի վերաբերյալ տվյալները.

2) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների ընդհանուր բնութագիրը.

3) գործածության նպատակը եւ վայրը.

4) ռիսկի գնահատումը.

5) կիրառվելիք մեկուսացման միջոցները.

6) շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունը, ինչպես նաեւ մարդու առողջությանը սպառնացող վտանգը.

7) հնարավոր պատահարների դեպքում իրականացվելիք արտակարգ իրավիճակի պլանը.

8) հնարավոր անբարենպաստ ազդեցության մոնիթորինգի ծրագիրը.

9) հնարավոր անբարենպաստ ազդեցությունների վերացման միջոցառումների ծրագիրը.

10) սույն օրենքի 25-րդ հոդվածում նշված հասարակական լուսման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը.

11) լիազոր պետական կառավարման եւ այլ մարմիններից համապատասխան համաձայնեցումները եւ այլ անհրաժեշտ փաստաթղթերը եւ դրանց բովանդակությունը:

**Հոդված 22. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության վերաբերյալ տեղեկատվությունը**

1. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության վերաբերյալ հանրության տեղեկատվության ապահովումն իրականացվում է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Չվտանգելով գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությունը կապահովի կենսաանվտանգության մատչելիությունը:

3. Պետական, առևտրային կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

## **ԳԼՈՒԽ 7**

### **ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԾԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Հոդված 23. Գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածությամբ զբաղվող անձանց իրավունքները**

1. Գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության լիցենզավորում ստացած իրավաբանական կամ ֆիզիկական անձինք իրավունք ունեն՝

1) լիազորված պետական կառավարման մարմնից ձեռք բերել գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության վերաբերյալ գիտական տվյալներ՝ եթե այդպիսիք առկա են.

2) լիազորված պետական կառավարման մարմնից ձեռք բերել գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ապահովման համապատասխան համաձայնեցումներ եւ այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

#### **Հոդված 24. Գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածությամբ զբաղվող անձանց պարտականությունները**

1. Գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածությամբ զբաղվել ցանկացող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, մինչեւ համապատասխան գործընթացի հետ կապված հայտ ներկայացնելը, պարտավոր են հասարակական լսումների միջոցով հանրությանը տեղեկացնել մեկուսացված համակարգում գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ռիսկերի գնահատման արդյունքների մասին:

2. Սույն օրենքով սահմանված կարգով գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության լիցենզիա ստացած իրավաբանական և ֆիզիկական անձինք պարտավոր են՝

1) յուրաքանչյուր գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության յուրաքանչյուր տեսակով զբաղվել՝ տվյալ գործընթացի համար սույն օրենքով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված լիցենզիայի պայմաններին եւ պահանջներին համապատասխան.

2) սույն օրենքով սահմանված կարգով գենետիկորեն ձեափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության իրականացման ընթացքում ապահովել շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության կենսաանվտանգությունը, բացառել մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը.

3) հնարավոր պատահարների եւ չնախատեսված իրավիճակների դեպքերում անհապաղ գրավոր տեղեկացնել այդ մասին լիազորված մարմիններին եւ սեփական միջոցների

հաշվին շտապ միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի, կենսաբազմազանության վրա հնարավոր վնասակար ազդեցության, մարդու առողջության սպառնալիքների կանխարգելման եւ հետեւանքների վերացումն ապահովելու ուղղությամբ:

## **ԳԼՈՒԽ 8**

### **ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ**

#### **Հոդված 25. Հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը**

1. Լիազորված պետական կառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանրությանը տրամադրում են տեղեկատվություն՝

1) գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության նախատեսվող գործընթացների մասին.

2) ծանուցողի, նրա կողմից իրականացվող գործունեության մասին.

3) ռիսկի գնահատման մասին.

4) հայտատուներին տրամադրված պատասխանների մասին.

5) տրամադրված լիցենզիաների մասին.

6) արտակարգ իրավիճակների մասին.

7) հանրության իրազեկման համար սույն օրենքով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

2. Համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինների կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվության տրամադրման միջոցներն են՝

1) զանգվածային լրատվության միջոցները.

2) էլեկտրոնային հաղորդակցության միջոցները.

3) հասարակական լուսնների կազմակերպումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցումներին պատասխանելը.

5) համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինների պաշտոնական վեբ կայքը.

6) տեղեկատվության փոխանակում եւ կենսաանվտանգության՝ տեղեկատվություն տրամադրող հաստատությունը:

3. Համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինները սույն օրենքով սահմանված կարգով հայտերը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, հանրությանը տեղեկացնում են այդ մասին՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից



ներկայացված հայտերը լիազորված պետական կառավարման մարմինների պաշտոնական վեբ կայքում տեղադրելու միջոցով:

4. Հանրության մեկնաբանություններն ընդունվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով տեղեկացնելու օրվան հաջորդող 35 օրերի ընթացքում:

5. Լիազորված պետական կառավարման մարմինները, կախված ստացված մեկնաբանություններից, քննարկման առարկա հանդիսացող ցանկացած հարցի շուրջ կազմակերպում են հասարակական քննարկումներ:

6. Համապատասխան լիազորված պետական կառավարման մարմինները ապահովում են հանրության մասնակցությունը սույն օրենքով սահմանված գործընթացներին:

**Հոդված 26. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսանվտանգության մասին տեղեկատվություն ստանալու հանրության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝ համապատասխան լիազորված պետական կառավարման մարմիններից պահանջել եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ստանալ կենսաանվտանգության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք կազմող:

**ԳԼՈՒԽ 9**

**ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 27. Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության նկատմամբ վերահսկողությունը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ իրավական այլ ակտերով սահմանված նորմերի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են լիազորված պետական կառավարման մարմինները:

**Հոդված 28. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում**

Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 29. Սույն օրենքը ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> << ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

h/h	Առարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	1.	2.	3.	4.
1.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 05.11.2013թ. N 01/6542-13</p>	<p>1. Օրենքի նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված չեն: Այսպես՝ նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է իրավաբանական անձանց կողմից գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կենսասանվտանգության ռիսկերի գնահատման արդյունքների մասին հասարակական լուսմների միջոցով հանրությանը տեղեկացնելու վերաբերյալ դրույթներ, մինչդեռ պարզ չէ, թե իրավաբանական անձանց կողմից հիշյալ տեղեկությունները չտրամադրելու դեպքում ինչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

		<p>2.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</p> <p>Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված է լրացում կատարել և հոդվածը լրացնել նոր՝ 44-րդ կետով, մինչդեռ հոդվածում արդեն իսկ ներառված է 44-րդ կետը:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>2-րդ հոդվածի 44-րդ կետում բազային տուրքը սահմանված է տասնհինգհազարապատիկի չափով:</p>
<p>2.</p>	<p>ՀՀ Էկոնամիկայի նախարարություն նախարարի տեղակալ Արա Պետրոսյան</p> <p>Նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյան</p>	<p>1.Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների շուկայի հետ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա <i>ազդեցություն չհայտնաբերվելու</i> եզրակացություն:</p> <p>1 Առարկություններ չկան:</p>	<p>Չի ընդունվել :</p>	<p>Օրենքի նախագիծը վերաբերվում է ԳՁՕ գործածությանը մեկուսացված համակարգերում:</p>

3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Առարկություններ չկան:		
4.	ՀՀ առողջապահության նախարարություն	Առարկություններ չկան:		
5.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առարկություններ չկան:		
6.	ՀՀ բնապահպանության նախարարություն	Առարկություններ չկան:		

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> << ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

h/h	Առարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1.	2.	3.	4.
1.	<< Ազգային ժողով <<Օրինաց երկիր>> պատգամավորական խմբակցություն 09.10.2013թ. N 02/10.5/15168-13	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ ենթակետում <<հանդիսանում է>> բառից հետո լրացնել <<գենետիկական անվտանգության գոտի և>> բառերը	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան ուղղումը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> << ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

h/h	Առարկության հեղինակը, գրության համարը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	2.	3.	4.	
	<p>&lt;&lt; Ազգային ժողովի պատգամավորներ ՎԱՀԱԳՆ ՄԱԽՍՈՒԴՅԱՆ (106) ԼՅՈՎԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ (012) ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ (108) 07.11.2013թ.</p>	<p>1. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետի &lt;&lt;կարող է&gt;&gt; բառը հանել:</p> <p>2. 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործում» հասկացությունը փոխարինել «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն» հասկացությամբ, նկատի ունենալով, որ Նախագծի «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 2-րդ հոդվածով տրված է «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն» հասկացության սահմանումը:</p> <p>3. Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության ռիսկի գնահատման կարգը և մեթոդական ուղեցույցը</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսասանվտանգության ռիսկի գնահատման կարգը և մեթոդական ուղեցույցը, ինչպես նաև լիցենզիայի գործողության կասեցնելու,</p>

		<p>հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այնուամենայնիվ, Նախագծին կից հիմնավորման մասին տեղեկանքում նշված չէ ՀՀ կառավարության որոշման կամ իրավական այլ ակտի ընդունման նախատեսվող կոնկրետ ժամկետը:</p> <p>4. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի &lt;&lt;Հայաստանի Հանրապետության&gt;&gt; բառերը հանել:</p> <p>5. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «լիազորված պետական մարմիններին», 13-րդ հոդվածի 4-րդ մասի «լիազորված մարմին», 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «պետական լիազոր մարմին», 2-րդ մասի «լիազորված պետական մարմին», 22-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմինները» բառերն համապատասխան հոլովով փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը» բառերով:</p> <p>6. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում եզակի թվով օգտագործված «Գենետիկորեն ձեափոխված օրգանիզմի գործածության» հասկացությունը փոխարինել հոգնակի թվով՝ «Գենետիկորեն</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>դադարեցնելու կարգը ընդունել 18 ամիս հետո</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	---	--	---

		<p>ձևափոխված օրգանիզմների գործածության» հասկացությամբ:</p> <p>7. Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «13-րդ հոդվածով սահմանված հայտի պահանջները» բառերը փոխարինել «13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հայտում պահանջվող տեղեկությունները» բառերով:</p> <p>8. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գաղտնի համարվող» և Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի «գաղտնիք հանդիսացող» բառերը փոխարինել «գաղտնիք կազմող» բառերով:</p> <p>9. Նախագծի 23-րդ հոդվածի 5-րդ մասից հանել &lt;&lt;կարող են&gt;&gt; բառերը:</p> <p>10. Նախագծի 24-րդ հոդվածի «օրենքով պահպանվող» բառերը փոխարինել «օրենքով սահմանված գաղտնիք կազմող» բառերով:</p> <p><b>Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.</b></p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	--	--	---



		<p>1. Նախագծի 1-ին հոդվածի «1 տասնազարապատիկի չափով» բառերը փոխարինել «10000-ապատիկի չափով» բառերով՝ ապահովելով Օրենքի և Նախագծի շարադրանքի համապատասխանությունը:</p> <p>2. Նախագծի 2-րդ հոդվածին՝ «տասնհինգազարապատիկ չափով» բառերը փոխարինել «15000-ապատիկի չափով» բառերով:</p> <p>3. . Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվել է Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 44-րդ կետով, մինչդեռ Օրենքի 20-րդ հոդվածում արդեն իսկ ամրագրված է <b><u>44-րդ կետ</u></b> : Ուստի անհրաժեշտ է առաջարկվող լրացման կետի համարակալումը փոխել 49-ի:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>փոփոխություն</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
1.	ՄԱՐՏՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ (034)	<p>1. Նախագծի 2-րդ հոդվածում սահմանել նոր հասկացություններ. &lt;&lt;դիսկ&gt;&gt;, &lt;&lt;ազատ գոտի&gt;&gt;, &lt;&lt;գործընթաց&gt;&gt;:</p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի &lt;&lt;ձևերի&gt;&gt; բառից հետո լրացնել &lt;&lt;ներառյալ դրանց հետ կապված արտահանումը, ներմուծումը և տարանցիկ փոխադրումը&gt;&gt; բառերը:</p> <p>3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի «կարգավորվում են» բառից հետո լրացնել</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>2-րդ հոդվածում սահմանված են դիսկի գնահատում և կառավարում, ինչպես նաև գենետիկական անվտանգության գոտի հասկացությունները</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>

		<p>«Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը:</p> <p>4. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ կետերը խմբագրել, նկատի ունենալով, որ հոդվածը վերաբերում է կենսաանվտանգության ապահովման հիմնական սկզբունքներին, սակայն հոդվածը միաժամանակ պարունակում է պարտադրող նորմեր:</p> <p>5. Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրել նախագծի 13-րդ հոդվածում:</p> <p>6. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «լիազոր պետական մարմնի (մարմինների) ճանաչումը» բառերը փոխարինել «լիազոր պետական կառավարման մարմնի (մարմինների) ճանաչումը» բառերով:</p> <p>7. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը «պետական» բառից հետո լրացնել «կառավարման» բառով:</p> <p>8. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված «&lt;&lt; կառավարության կողմից սահմանված մեկուսացված համակարգին ներկայացվող տեխնիկական և մեթոդական</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է փոփոխություն</p> <p>Կատարվել է փոփոխություն</p> <p>Կատարվել է փոփոխություն</p> <p>Կատարվել է փոփոխություն</p> <p>Կատարվել է փոփոխություն</p>
--	--	---	--	--

		<p>պահանջները համարվում են լիցենզավորման պարտադիր պահանջ:» նախադասությունը իրավասություն չէ, այն ամրագրել նախագծի 13-րդ հոդվածում:</p> <p>9. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:</p> <p>10. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի &lt;&lt;Եթե համայնքը հայտարարում է գենետիկական անվտանգության գոտի ապա դա հանդիսանում է մերժման հիմք&gt;&gt;, նախ &lt;&lt;հանդիսանում է&gt;&gt; բառից հետո լրացնել &lt;&lt;հայտի&gt;&gt; բառը և նշված նախադասությունը ամրագրել հոդված 16-ում:</p> <p>11. Նախագծի հոդված 12-ի կետ 1-ում սահմանվում է՝ «Փորձագիտական խումբը բաղկացած է կենսանվտանգության ոլորտի համապատասխան մասնագետներից, որոնց կազմը ստեղծվում և համալրվում է ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից»: Հարկավոր է հստակեցնել համապատասխան մասնագետները:</p> <p>12. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է փոփոխություն համապատասխան</p> <p>Կատարվել է փոփոխություն համապատասխան</p> <p>Կատարվել է փոփոխություն համապատասխան</p> <p>Կատարվել է փոփոխություն համապատասխան</p>
--	--	---	---	---



		<p>4-րդ և 7-րդ մասով սահմանված դիսկի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը, լիազորված մարմինը պարտավոր է պահանջել մեկուսացված համակարգում օգտագործման պայմանների փոփոխություն, որը չսպահովելու դեպքում՝ պարտավոր է անմիջապես <b>սույն օրենքի համաձայն կասեցնել լիցենզիայի գործողությունը</b>», սակայն, Նախագծով սահմանված չեն լիցենզիայի կասեցման հիմքերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է Նախագծում հստակ սահմանել իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնելու, դադարեցնելու կարգը և պայմանները:</p> <p>15. Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով» բառերը փոխարինել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով» բառերով:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	---	--------------------	---

